ԴՅՈՒՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՂԸ

ՎԱՍԻԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Մտավորականությունը սովետական հասարակության սոցիալական կառուցվածքի ամենաարագ աճող բաղադրամասն է։ Դա պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացով և ժողովրդի կուլտուր-կրթական մակարդակի հետագա բարձրացումով։ Հատկապես բուռն տեմպերով է աճում արտադրական մտավորականությունը, որի կազմում կատարվող որակական մեծ տեղաշարժերը դրական ներդործություն են ունենում մեր հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունների վրա։

Բնականաբար, սոցիալական այդ իրավի ուսումնասիրման պրոբլեմը չէր կարող վրիպել սովետական փիլիսոփաների, պատմաբանների և սոցիոլոգների ուշադրությունից։ Վերջին տարիներին լույս են տեսել բազմաթիվ մենագրություններ և կոլեկտիվ աշխատություններ ինչպես սովետական ողջ մտավորականության[1]*, այնպես էլ նրա ինքնուրույն՝ գյուղական ջոկատի վերաբերյալ*[2]*։ Այդ աշխատություններում այլ պրոբլեմների հետ միասին շոշափվում են մտավորականության բնութագրման չափանիշների և ներքին կառուցվածքի հարցերը, արտահայտվում տարբեր կարծիքներ։ Կանգ առնենք առավել տարածված երկու կարծիքի վրա։*

Հեղինակավոր ուսումնասիրողների մի ստվար խումբ (Մ. Ռուտկևիչ, Վ. Սեմյոնով, Ս. Սենյավսկի, Յու. Հարությունյան և ուրիշներ) մտավորականության տարբերակման ելակետ է համարում բարձրորակ մտավոր աշխատանքը, որով զբաղված մարդիկ պետք է ունենան բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական կրթություն։ Նման տեսակետը սխալ չէ, բայց

[1] М. Н. Руткевич, Изменение социальной структуры советского общества и интеллигенция («Социология в СССР», т. I, М., 1966), *նույնի՝* Интеллигенция как социальная группа и ее сближение с рабочим классом («Классы, социальные слои и группы в СССР», М., 1968), *նույնի՝* Интеллигенция в развитом социалистическом обществе, М., 1977; В. С. Семенов, Советская народная интеллигенция («Политическое самообразование», 1967, № 12); П. Н. Симуш, Социальная роль и судьба интеллигенции, М., 1969; Р. О. Карапетян, Интеллигенция в социальной структуре общества, М., 1974 *և այլն։*

[2] З. Н. Монич, Интеллигенция в структуре сельского населения, Минск, 1971; Н. Моматов, О сдвигах в структуре современной сельской производственно-технической интеллигенции, Ташкент, 1973; В. П. Суздальцев, Развитие сельскохозяйственной интеллигенции в условиях НТР, М., 1974.; В. Н. Зорин, В. К. Гривенная, Социально-профессиональная структура сельскохозяйственной интеллигенции и тенденции ее развития в условиях НТР («Философские науки», Алма-Ата, 1973, вып. 2); В. С. Пузанов, Сельский интеллигент, М., 1977 *և այլն։*

[3] М. Н. Руткевич, Интеллигенция как социальная группа и ее сближение с рабочим классом, с 141; *նույնի՝* Интеллигенция социалистического общества («По-

թերի է երկու նկատառումով։ Նախ, եթե միայն մտավոր աշխատանքը և մասնագիտական կրթությունը դարձնենք մտավորականության տարբերակման չափանիշներ, ապա բանվոր դասակարգի՞, գյուղացիությա՞ն, թե՞ մտավորականության կազմում պետք է տեղադրել արտադրության ավտոմատացված ճյուղերում զբաղված և համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող բանվոր-կարգավորողներին, որոնց աշխատանքը ոչ միայն հեռու է ավանդական ֆիզիկականից, այլև հիմնականում մտավոր աշխատանքի բնույթ է կրում։ Սովետական գրականության մեջ հաղթանակած պետք է համարել այն տեսակետը, ըստ որի բանվոր-կարգավորողները մտավորականներ չեն։ Երկրորդ. սոցիալական ո՞ր խմբին դասել մասնագիտական կրթություն չունեցող «ոչ մասնագետ-ծառայողներին» և «մասնագետ-պրակտիկներին»։ Մ. Ռուտկևիչը ուղղակիորեն նշում է. «Բարդ է դասավորվում «պրակտիկներ» խավի գործը, որը հանդիսանում է սահմանային խավ մտավորականության և ծառայողների միջև։ Այդ խավի վերին մասը պետք է վերագրվի մտավորականությանը, քանի որ աշխատանքի բնույթով չի զանազանվում նույն պաշտոնը վարող դիպլոմավոր մասնագետներից... Դա ճիշտ է և բարձր տարիքի «պրակտիկներին» մի մասի նկատմամբ, որոնք ունեն տեխնիկական և կազմակերպչական շատ մեծ փորձ, որը ծածկում է դիպլոմի բացակայությունը»[4]։ Փաստորեն, ըստ Մ. Ռուտկևիչի, «ոչ մասնագետ-ծառայողները» և մասամբ «պրակտիկները» չեն մտնում մտավորականության մեջ, չնայած գերազանցապես զբաղվում են մտավոր աշխատանքով։

Ինչ խոսք, ներկա պայմաններում մտավոր աշխատանքը դադարել է մտավորականության մենաշնորհը լինելուց։ Սակայն նրա մենաշնորհը չէ նաև մասնագիտական կրթությունը։ Տիտատեխնիկական առաջընթացի ազդեցության տակ երևան են եկել աշխատողների հատուկ խմբեր (ապարատավարներ, ավտոմատավարներ և այլն), որոնք աշխատանքի բնույթով, կրթական մակարդակով ավելի մոտ են մտավորականությանը, քան բանվոր դասակարգին և կոլտնտեսային գյուղացիությանը[5], բայց չեն մտնում մտավորականության կազմի մեջ։ Ավելին, արտադրության մի շարք ճյուղերում պահանջվող բարձր մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտությունը հանգեցնում է այն բանին, որ բանվորների փոխարեն անմիջական արտադրության մեջ սկսում են աշխատել տեխնիկների, անգամ ինժեներների

литическое самообразование», 1971, № 10, с. 28); նույնի՝ Тенденции развития социальной структуры советского общества, М., 1975, с. 47—49; В. С. Семенов, Интеллигенция и служащие в условиях строительства коммунизма («Строительство коммунизма и развитие общественных отношений», М., 1966, с. 162); С. Л. Сенявский, Изменение в социальной структуре советского общества. 1938—1970, М., 1973, с. 132; Ю. В. Арутюнян, Социальная структура сельского населения СССР, М., 1971, с. 95—96 և այլն։

[4] М. Н. Руткевич, Тенденции развития социальной структуры советского общества, с. 52—53.

[5] Օրինակ, բանվոր-օպերատորի աշխատանքային ժամանակի 69%-ը ծախսվում է տեխնոլոգիական պրոցեսների դիտարկման, 6%-ը՝ հաշվարկների և աշխատանքային ծրագրերի նախապատրաստման, 25%-ը՝ կառավարման (սպասարկման) վրա։ Ավտոմատավարների մոտ մտավոր աշխատանքը կազմում է 44 [illegible] իսկ մնացած ժամանակը ծախսվում է աշխատանքային ֆունկցիաների վրա, որտեղ հավասարապես զուգակցվում են մտավոր և ֆիզիկական աշխատանքները («Научный коммунизм и фальсификация его ренегатами», М., 1974, с. 105).

մի մասը։ Սրանք մտնում են բանվոր դասակարգի մեջ որպես նրա բարձրորակ խավ։ Ուստի ճիշտ չէ նաև մտավորական համարել միայն դիպլոմավոր մասնագետներին։

Որոշ ուսումնասիրողներ (Վ. Ստարովերով, Պ. Սիմուշ, Ն. Ախտով և ուրիշներ) աշխատողների վերոհիշյալ խմբերի (օպերատորներ, ավտոմատավարներ և այլն) նկատմամբ կիրառում են «բանվոր-մտավորական» կամ «կոլտնտեսական-մտավորական» տերմինները[6], որոնք սխալ են թեկուզև այն պատճառով, որ աշխատանքի բնույթի փոփոխմամբ չեն փոխվում օպերատորների կամ ավտոմատավարների արտադրողական ֆունկցիաները։ Եվ եթե բանվորի կամ կոլտնտեսային գյուղացու աշխատանքը ավելի շատ մտավոր բնույթ է ընդունել, ապա նրանց սոցիալական տեղը դրանով չի փոխվել։ Նրանք են մնում նյութական բարիքների անմիջական արտադրողներ։ Հետևաբար, միայն մտավոր աշխատանքը և մասնագիտական կրթությունը որպես մտավորականության տարբերակման չափանիշներ դիտելը նեղ է ու միակողմանի և ամբողջությամբ չի սպառում հարցի լուծումը։ Ճիշտ են այն ուսումնասիրողները՝, որոնք նկատի ունենալով մարքսիզմի դասականների ասույթները, դասակարգերի և մտավորականության բնութագրման համար օգտագործում են «անմիջական» և «միջնորդավորված» արտադրողական աշխատանք հասկացությունները։ Նման մոտեցումը երաշխավորում է զարգացած սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի վերլուծության ժամանակ խուսափել սխալ եզրակացություններից, և մի կողմից, բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության, իսկ մյուս կողմից՝ մտավորականության սոցիալական սահմանները որոշելիս հաշվի առնել ոչ թե աշխատանքային պրոցեսում ծախսված մտավոր էներգիայի չանակը, այլ մտավոր աշխատանքի որակական բովանդակությունը և գործառական նշանակությունը, այսինքն՝ նյութական բարիքների արտադրության նկատմամբ ունեցած հարաբերությունը և կատարած սոցիալական ֆունկցիաները։

Մեթոդոլոգիական այդպիսի մոտեցման անհրաժեշտությունը պայմանավորված է ամենից առաջ նրանով, որ հնարավորություն է տալիս որոշելու արտադրական, մասնավորապես մեզ հետաքրքրող գյուղական այդ կատեգորիայի մտավորականության ընդգրկման սահմանները, առանց որի չի կարելի բազմակողմանի վերլուծել նրա կազմում տեղի ունեցող քանակական և որակական տեղաշարժերը։ Այլ կերպ ասած, «միջնորդավորված» արտադրո-

---

[6] Б. И. Староверов, Советская деревня на этапе развитого социализма. М., 1976, с. 96—97; А. М. Гелюта, В. И. Староверов, Социальный облик рабочего интеллигента. М., 1977, с. 4; П. И. Симуш, Проблемы анализа межклассовых отношений в развитом социализме («Вопросы философии», 1977, № 8, с. 10); Н. А. Антов, О некоторых дискуссионных вопросах изучения советской интеллигенции («Социологические исследования», 1979, с. 29—35) և այլն։

[7] А. Е. Крухмалев, Тенденции развития рабочего класса в условиях научно-технической революции («Научно-техническая революция и общество», М., 1973, с. 312); О. Н. Трубицын, О методологическом значении понятий «непосредственный» и «опосредованный» производительный труд в социальной характеристике места и роли интеллигенции («Сельская интеллигенция и ее роль в условиях развитого социализма», М., 1979, с. 3—16) և այլն։

ղական մտավոր աշխատանք հասկացության կիրառման դեպքում որոշակի են դառնում մեր պատկերացումները աոցիալական այդ միջնախավի կառուցվածքային բաղադրամասերի նկատմամբ։ Նման մեթոդոլոգիան երաշխիքներ է տալիս գյուղական արտադրական մտավորականներ համարել՝ ա) բուն մտավորականներին (դիպլոմավոր մասնագետներին), բ) «մասնագետ-պրակտիկներին», որոնք չունեն համապատասխան կրթություն, բայց երկարամյա աշխատանքային գործունեության պրոցեսում հմտացել են որևէ մասնագիտության կամ ղեկավար աշխատանքների կազմակերպման մեջ, գ) «ոչ մասնագետ-ծառայողներին», որոնք չգտնվելով անմիջական արտադրության պրոցեսում, զբաղված են բարձր որակավորում չպահանջող մտավոր աշխատանքով։ Ի տարբերություն երկրորդի, «ոչ մասնագետ-ծառայողներիս խումբը զբաղված է ոչ թե աշխատանքների կազմակերպման սիստեմում, այլ կատարում է բուն մտավորականներին օգնող-օժանդակող ֆունկցիա։ Եվ չնայած այդ երեք խմբերը դասակարգվում են հասարակական արտադրության մեջ ունեցած դերով և աշխատանքի բովանդակությամբ, բոլորն էլ նյութական բարիքների միջնորդավորված արտադրողներ են։ Հայդպիսի մոտեցման դեպքում է թերևս, որ ամբողջությամբ հաշվի է առնվում գյուղական արտադրական մտավորականության տարակազմությունը (երբ մի մասը զբաղված է առավել բարդ ստեղծագործական աշխատանքով, իսկ մյուսը պարզ)։ Ճիշտ այնպես, ինչպես ասենք՝ կոլտնտեսային գյուղացիության տարբեր խմբեր զասակարգվում են աշխատանքի բովանդակությամբ և արտադրության մեջ ունեցած դերով, բայց բոլորն էլ մտնում են նույն դասակարգի կազմի մեջ։

Հարկ է նշել, որ դիպլոմավոր մասնագետների խումբը ոչ միայն գյուղատնտեսական մտավորականության կենտրոնական դեմքն է, այլև նրա ամենաարագ աճող բաղադրամասը։ Վերջին չորս տասնամյակների ընթացքում երկրի գյուղատնտեսության մեջ զբաղված բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների թվաքանակն աճել է 47 անգամ[9]։ Գնալով աճում է նրանց դերը գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման շնորհիվ։ Հիմնականում դրանով է պայմանավորված վերջին 10—12 տարիների ընթացքում դիպլոմավոր մասնագետների առավել ինտենսիվ աճը։ Այսպես, 1965—1977 թթ. ՍՍՀՄ կոլտնտեսություններում, սովխոզներում, միջտնտեսային, օժանդակ և այլ գյուղատնտեսական ձեռնարկություններում զբաղված բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների թվաքանակն աճել է ավելի քան 2,7 անգամ[9]։

Բնորոշ է այն, որ որակավորված մասնագետների կազմի ինտենսիվ աճն ուղեկցվում է գյուղատնտեսության մեջ զբաղված ամբողջ աշխատողների թվաքանակի կրճատմամբ։ Այսպես, եթե 1970 թ. համեմատությամբ 1977 թ. դիպլոմավոր մասնագետների թվակազմն աճեց 70%-ով, ապա ընդհանուր աշխատողներինը կրճատվեց 1,9%-ով[10]։

Հատկապես արագ է աճում գյուղատնտեսական նոր պրոֆիլի մասնա-

---

[8] Լ. Ի. Բրեժնև, ՍՍՀՄ սահմանադրության մասին, Երևան, 1978, էջ 82։

[9] «Народное хозяйство СССР в 1970 году». М., 1971, с. 406; «Народное хозяйство» СССР в 1978 году», М., 1979, с. 288.

[10] «Народное хозяйство СССР в 1978 году», с. 287, 288.

գետների՝ տեխնիկների, ինժեներների, տնտեսագետների կազմը, որը բացատրվում է այդ մասնագետների նկատմամբ գյուղատնտեսության աճող պահանջներով։ Եթե 1961—1979 թթ. երկրի կոլտնտեսային բնակչության կտրուկ նվազման հետևանքով որոշ չափով կրճատվեց և գյուղատնտեսները ու զոոտեխնիկների քանակը, ապա ինժեներների և տեխնիկների թվակազմը աճեց շուրջ 2,7 անգամ[11]։ Այդ է ապացուցում նաև 1970—1975 թթ. հանրապետության գյուղատնտեսության մեջ զբաղված դիպլոմավոր մասնագետների քանակական փոփոխություններն արտացոլող ստորև բերվող աղյուսակը[12]։

Մասնագետների քանակական փոփոխություններն ըստ առանձին պրոֆիլների

Գյուղատնտեսության մեջ զբաղված մասնագետներ	Տարիներ		1975 թ., 1970 թ. համեմատությամբ (տոկոսներով)
	1970 թ.	1975 թ.	
Ընդամենը	8311	10497	126,3
Նրանցից՝			
Գյուղատնտեսներ	2636	3110	118,0
Զոոտեխնիկներ	1405	1880	133,8
Անասնաբույժներ	869	1071	123,2
Ինժեներներ	276	468	169,6
Տնտեսագետներ	187	398	212,8
Տեխնիկներ	928	1252	134,9

Բուն մտավորականության քանակական փոփոխություններին զուգընթաց նրա կազմում տեղի են ունենում նաև որակական մեծ տեղաշարժեր. առավել արագ է աճում բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների թիվը։ Եթե 1960—1975 թթ. ընթացքում երկրի գյուղատնտեսության մեջ ընդգրկված դիպլոմավոր մասնագետների քանակն աճել էր 3,1 անգամ, ապա բարձրագույն կրթություն ունեցողներինը՝ 3,5, իսկ միջնակարգ մասնագիտական կրթության մասնագետներինը՝ 3 անգամ[13]։ Այդ օրինաչափությունը դիտվում է նաև մեր հանրապետությունում՝ այն տարբերությամբ, որ այստեղ դիպլոմավոր մասնագետների աճը համեմատաբար դանդաղ է ընթանում։ Այսպես, նշված տարիներին, ՀՍՍՀ գյուղատնտեսության մեջ զբաղված բուն մտավորականների թվաքանակն աճեց միայն 2,2, իսկ բարձրագույն կրթություն ունեցողներինը՝ 2,9 անգամ[14]։ 1977 թ. ապրիլի 1-ի դրությամբ Սովետական Հայաստանում կոլտնտեսությունների նախագահների 72 և սովխոզների դիրեկտորների ավելի քան 90%-ը ունեին բարձրագույն, իսկ համապատասխանաբար 21 և 8,7%-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն։ Ընդ որում, նրանց մեծ մասն ուներ գյուղատնտեսական կրթություն։ Այսպես, բարձրագույն կրթություն ունեցող կոլտնտեսությունների նախագահների 74,5 և սովխոզների դիրեկտորների 80%-ը ունեին գյուղատնտեսի,

[11] «Народное хозяйство СССР в 1970 году», с. 525; «Народное хозяйство СССР в 1978 году», с. 289 (ապրիլի 1-ի տվյալներով)։

[12] ՀՍՍՀ ԿՎՎ աշխատանքի և աշխատավարձի բաժին, զեկուցագրական և վերլուծական գրառումներ, 1976 թ., գ. 9, թ. 3։

[13] «Народное хозяйство СССР в 1960 году», М., 1961, с. 524; «Народное хозяйство СССР в 1975 году», М., 1976, с. 443.

[14] Նույն տեղում։

զոոտեխնիկի կամ անասնաբույժի մասնագիտություն։ Տնտեսագիտական և ինժեներատեխնիկական կրթություն ունեցողները կազմում էին կոլտնտեսությունների նախագահների 11 և սովխոզների դիրեկտորների 12%-ը[15]։

Նույն թվականի տվյալներով, հանրապետության կոլտնտեսություններում գյուղատնտեսների 98, զոոտեխնիկների 97, անասնաբույժների 97, ինժեներների 78%-ը ունեին մասնագիտական կրթություն։ Սովխոզներում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 97, 97, 96 և 86%, իսկ միջտնտեսային գյուղատնտեսական ձեռնարկություններում ընդգրկված մասնագետները, գրեթե առանց բացառության, ունեին բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն[16]։

Մոտավորապես նույնն է պատկերը ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ում։ Այսպես, 1979 թ. ապրիլի 1-ի դրությամբ, երկրի կոլտնտեսություններում ընդգրկված գյուղատնտեսների 96,8 և զոոտեխնիկների 94,6%-ը ունեին մասնագիտական կրթություն։ Այդ տվյալները փոքր-ինչ ցածր էին սովխոզներում և կազմում էին համապատասխանաբար 94,7 և 91,4%[17]։

Մտավորականության կազմում դիպլոմավոր մասնագետների տեսակարար կշռի աճին զուգընթաց նկատվում է «մասնագետ-պրակտիկներիս» բաժնի կրճատման միտում։ Վերջիններս այժմ գյուղատնտեսների, զոոտեխնիկների ու անասնաբույժների շրջանում չնչին փոքրամասնություն են կազմում։ Սակայն հարկ է նշել, որ գյուղատնտեսական «մասնագետ-պրակտիկներիս» բաժնի կրճատման պրոցեսը համեմատաբար դանդաղ է տեղի ունենում ինժեներատեխնիկական աշխատողների և, մասնավորապես, արտադրության միջին օղակի ղեկավարների (բրիգադավարներ, ֆերմաների վարիչներ և այլն) մոտ։ 1965—1979 թթ. Սովետական Միության կոլտնտեսություններում և սովխոզներում միջին հաշվով ինժեներների և տեխնիկների կազմում «պրակտիկներիս» տեսակարար կշիռը 63,2%-ից իջավ 34,2-ի, իսկ բրիգադավարների և ֆերմաների վարիչների շրջանում՝ 82,3%-ից՝ 55,7-ի[18]։ Փոքր-ինչ բարվոք է վիճակը ՀՍՍՀ-ում։ Այսպես, 1979 թ. ապրիլի 1-ի դրությամբ հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում «պրակտիկներ» էին ինժեներների և տեխնիկների 30,9, բրիգադավարների և ֆերմաների վարիչների 45,3%-ը[19]։ Եվ չնայած ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ մեր հանրապետությունում նրանց մի մասը ուսանում է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում և շուտով կլրացնի դիպլոմավոր մասնագետների շարքերը, այնուհանդերձ, «պրակտիկներիս» զգալի բաժնի առկայությունը, հատկապես միջին օղակի ղեկավարների կազմում, չի կարելի նորմալ երևույթ համարել։ Եթե սոցիալիստական շինարարության նախորդ փուլերում դիպլոմավոր մասնագետների սակավությամբ պայմանավորված՝ «պրակտիկներ» էին գլխավորապես ընդգրկված գյուղատնտեսական արտադրության մեջ և պատվով դիմացան ժամանակի քննությանը, ապա այժմ և՛ ամբողջ երկրում, և՛ մեր հանրապետությունում պատ-

15 Տե՛ս ՀՍՍՀ ԿՎՎ գյուղատնտեսության բաժնի նյութերը։ Հաշվարկները մերն են։

16 Նույն տեղում։

17 «Народное хозяйство СССР в 1978 году», с. 290, 292.

18 «Народное хозяйство СССР в 1964 году», М., 1965, с. 424, 426, «Народное хозяйство СССР в 1978 году», с. 290, 292.

19 «Народное хозяйство СССР в 1978 году», с. 290, 292.

բաստվում են բավականաչափ բարձրորակ կադրեր, որոնցից, սակայն, ոչ բոլորն են սիրով լծվում միջին օղակի աշխատանքներին, և դրա հետևանքով առաջացած բացը դարձյալ լրացնում են «պրակտիկները»։ Բնականաբար, գիտատեխնիկական առաջընթացի ներկա պայմաններում արտադրության միջին օղակները կարիք ունեն ոչ թե «պրակտիկների», այլ ժամանակի ոգուն համապատասխան որակավորված մասնագետների։

Այդ պրոբլեմը մշտապես գտնվել է վերադաս մարմինների ուշադրության կենտրոնում։ Կուսակցության և կառավարության վերջին, մասնավորապես, ՍՄԿԿ Կենտկոմի 1976 թ. դեկտեմբերի «Գյուղատնտեսության միջին օղակը կադրերով, մեխանիզատորներով և այլ մասսայական մասնագետներով ամրապնդելու ուղղությամբ ՍՄԿԿ Ռոստովի մարզկոմի աշխատանքների մասին» և ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1977 թ. նոյեմբերի «Գյուղատնտեսության մասնագետներին օղակներ, բրիգադներ, ֆերմաներ և կոլտնտեսությունների ու սովխոզների արտադրության միջին օղակի ուրիշ ստորաբաժանումներ ղեկավար աշխատանքների տեղափոխումը խթանելու լրացուցիչ միջոցառումների մասին» որոշումները հետապնդում էին մեկ նպատակ՝ լրացուցիչ խթաններ մշակել դիպլոմավոր մասնագետներին արտադրության միջին օղակներում ամրապնդելու ուղությամբ։ Կուսակցության և կառավարության այդ որոշումները լայն արձագանք գտան գյուղատնտեսական մասնագետների շրջանում, որոնց մի մասը տեղափոխվեց արտադրության միջին օղակներ։ Նման միտումը երաշխավորում է մոտակա տարիներին արտադրության հիշյալ ստորաբաժանումներում նույնպես «պրակտիկների» բաժինը հասցնել նվազագույնի։

Ինչ վերաբերում է «ոչ մասնագետ-ծառայողներին», ապա բավարար տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս մեկնաբանելու նրանց կազմում կատարվող տեղաշարժերը։ Սակայն, եթե հաշվի առնենք, որ «ոչ մասնագետ-ծառայողները» հիմնականում կատարում են բուն մտավորականներին օգնող-օժանդակող ֆունկցիա, ապա ինչպես արտադրության կառավարման բարդացումը, այնպես էլ դիպլոմավոր մասնագետների և ընդհանրապես «միջնորդավորված» արտադրողական աշխատանքի տեսակարար կշռի մեծացումը պետք է, որ առաջ բերեն, ի տարբերություն «պրակտիկների», նոր հաստիքային աշխատողների՝ լցավորման կետերի անձնակազմի, հաշվետար-հաշվառների, քարտուղար-մեքենագրուհիների և այլոց բաժնի ավելացում, որի մասին, ինչպես նշեցինք, տվյալները բավարար չեն։

Համառոտակի վերլուծելով գյուղական արտադրական մտավորականության տարբերակման հատկանիշները և նրա կազմում կատարված քանակական և որակական փոփոխությունները, անհրաժեշտ ենք գտնում ընդհանուր դծերով անդրադառնալ այդ միջնախավի, մանավանդ՝ կոլտնտեսային սեկտորում ընդգրկված մտավորականության սոցիալական տեղի բնութագրմանը, որտեղ տրամախաչվում են հետազոտողների մեծ մասի տեսակետները։

Ուսումնասիրողների մի մասը (Օ. Շկարատան, Տ. Բատիլինա, Կ. Բուսլով, Պ. Սիմուշ և ուրիշներ), հիմք ընդունելով արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը, արտադրական մտավորականությանը

դասում է բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության շարքը[20]։ Համանման մոտեցում են ցուցաբերում նաև Ն. Լավրինովիչը և Ս. Ամիրյանը[21]։ Դեմ չլինելով նշված գիտնականների այն ճիշտ մտքին, որ գյուղացիության արտադրական գործունեության պրոցեսում գնալով ավելի են զուգակցվում ֆիզիկական և մտավոր աշխատանքները, կարծում ենք, որ այդ երևույթը դեռևս բավարար հիմք չի տալիս Ն. Լավրինովիչի այն եզրակացության համար, ըստ որի կարելի է գյուղացիության կազմում դասել արտադրական մտավորականությանը[22]։ Նույն կարծիքին է և Ս. Ամիրյանը, որը նշում է, թե «կոլտնտեսության անդամ հանդիսացող բոլոր մասնագետները... մտնում են գյուղացիության դասակարգի մեջ և հանդիսանում են նրա գերազանցապես մտավոր աշխատանք կատարողների խավը»[23]։

Պաշտոնական վիճակագրական տեղեկատուներում ևս անտեսված է կոլտնտեսային մտավորականության ինքնուրույնությունը և այն գյուղացիության հետ մտցված է միասնական սոցիալական խմբի մեջ։ Փաստորեն, ըստ վիճակագրության, սովետական և պետական այլ տնտեսություններում աշխատող մտավորականները մեր երկրի մտավորականության հետ կազմում էն մեկ միասնական խավ, իսկ կոլտնտեսային մտավորականությունը, որը հասարակական արտադրության տվյալ համակարգում զբաղած տեղով, աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ ունեցած դերով, աշխատանքի բնույթով և բովանդակությամբ գրեթե չի զանազանվում մտավորականության մյուս ջոկատներից՝ օտարվում է։

Կոլտնտեսային մտավորականությանը գյուղացիության սոցիալական խմբի մեջ դասելու շարժառիթը, թերևս «կոլտնտեսական» և «կոլտնտեսային գյուղացի» հասկացությունների թվացող համահնչեղությունն է։ Իհարկե, կոլտնտեսային մասնագետը կոլտնտեսական է, սակայն նա կոլտնտեսային գյուղացի չէ։ Կոլտնտեսությունը բնորոշում է ոչ թե նրա սոցիալական պատկանելիությունը, այլ աշխատանքի վայրը։ Ուստի կոլտնտեսական լինելը պարտադիր պայման չէ գյուղացիության դասակարգի մեջ դասվելու համար։ Հետևաբար, հիմք ընդունելով միայն արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը և այն տարածելով մտավորականության վրա, փաստորեն վերջինս «կդարձնենք» դասակարգ։ Չլինելով այդպիսին և ինքնուրույն տեղ չզբաղելով հասարակական արտադրության համակարգում, մտավորականությունը սոցիալական տեղի բնութագրման տեսակետից իր վրա ամբողջապես չի տարածում դասակարգերի լենինյան դասական բնութագրման չափանիշները։ Լինելով սոցիալական միջնախավ, սոցիալիստա-

---

20 О. И. Шкаратан, Некоторые проблемы изучения социальной структуры общества («Классы, социальные слои и группы в СССР», М., 1968, с. 39); Т. С. Баталина, Некоторые проблемы изучения социальной структуры общества, Л., 1965, с 3; К. П. Буслов, О критерии внутриклассовых различий в СССР, Минск, 1966, с 5—6 և այլն։

21 Н. П. Лавринович, Основные тенденции развития внутриклассовой структуры колхозного крестьянства на этапе развитого социализма («Научный коммунизм», 1976, № 3); *Ս. Ս. Ամիրյան, Փոփոխություններ սովետական հասարակության սոցիալական կառուցվածքում, Երևան, 1973։*

22 Н. П. Лавринович, *նշվ. աշխ., էջ 37—38։*

23 *Ս. Ս. Ամիրյան, նշվ. աշխ., էջ 249։*

կան հասարակարգի արտադրական մտավորականությունը, ինչպես նշեցինք, դասակարգերից ամենից առաջ պանպանվում է նյութական բարիքների միջնորդավորված արտադրող լինելով։ Ուրեմն, նրա սոցիալական տեղը որոշելիս նպատակահարմար է շրջանցել երկրորդ չափանիշը և առաջինից անմիջապես անցում կատարել երրորդին, այսինքն՝ հասարակական արտադրության պատմականորեն որոշակի համակարգում գրաված տեղի (պրոֆեսիոնալ գրաղվածությունը մտավոր աշխատանքում) և աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ ունեցած դերի (արտադրության կազմակերպման և կառավարման հատուկ ֆունկցիաները) չափանիշները վերցնել մեկ միասնական ամբողջության մեջ։

Գյուղատնտեսական մտավորականության սոցիալական տեղն այլ կերպ է պատկերացնում ուսումնասիրողների մի այլ խումբ (Մ. Ռուտկևիչ, Վ. Պոգուգին, Յու. Սինցով, Վ. Խոլկինա և ուրիշներ)[24]։ Այսպես, Մ. Ռուտկևիչը հենում է այն բանից, որ ոչ թե սեփականության նկատմամբ ունեցած վերաբերմունքն է մեր հասարակարգի սոցիալական կառուցվածքում մտավորականության տեղի որոշման չափանիշ, այլ աշխատանքի բնույթը։ Եթե բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության միջև տարբերությունները պայմանավորված են սոցիալիստական սեփականության երկու ձևերի առկայությամբ, ապա մտավոր աշխատողներն այդ հայտանիշով չեն կարող հատուկ խմբի մեջ դասվել[25]։

Ինչպես նշեցինք վերևում, աշխատանքի բնույթը մտավորականության որակման չափանիշ դարձնելով՝ հարցն ամբողջովին չի լուծվում։ Բայց կոնկրետ տվյալ դեպքում մտավորականությունը դասակարգից անջատելու Մ. Ռուտկևիչի եզրակացությունը ճիշտ է։

Արտադրական մտավորականներին գյուղացիության դասակարգից զատելու դեպքում, փաստորեն, գյուղացիությունը չի օտարվում ֆիզիկական աշխատանքից։ Հեռու լինելով արդի գյուղում ծանր ֆիզիկական աշխատանքը բացառելու համոզումից, նկատենք նաև այն իրական փաստը, որ գիտատեխնիկական առաջընթացի ազդեցության տակ, կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման պայմաններում կոլտնտեսային գյուղացիության արտադրական գործունեության պրոցեսում գնալով մեծանում է մտավոր աշխատանքի տեսակարար կշիռը։ Գլխավորապես ֆիզիկական աշխատանքով զբաղվող գյուղացիների կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը «ոչ միայն բարձրացնում է նրանց ունակությունները և պատրաստվածությունը մտավոր աշխատանքի նկատմամբ, այլև ավելի շատ նմանության գծեր են երևան գալիս բանվոր դասակարգի և մտավորականության հետ»[26]։

---

[24] М. Н. Руткевич, Тенденции развития социальной структуры советского общества; նույնի՝ Интеллигенция в развитом социалистическом обществе. նույնի՝ В. И. Ленин и проблемы развития интеллигенции («Доклады к VII Международному социологическому конгрессу», Свердловск, 1970); В. Н. Погудин, Ю. Я. Синцов, Новейшая советская литература о социальных сдвигах в современной колхозной деревне («Вопросы истории», 1972, № 12); В. Н. Холкина, Внутриклассовые различия и профессиональная структура сельского населения» («Классы, социальные слои и группы в СССР», М., 1968).

[25] М. Н. Руткевич, Интеллигенция социалистического общества («Правда», 16. V. 1972).

[26] П. Н. Симун, Социальный портрет советского крестьянства, М., 1976, с. 33.

Մենք համառոտակի շարադրեցինք գյուղատնտեսական մտավորականության սոցիալական տեղի շուրջ դրականության մեջ երևան եկած երկու իրարամերժ դրույթները։ Այդ հարցին յուրօրինակ է մոտենում Յու. Հարությունյանը։ Նա ոչ համաձայն է մտավորականությունը դասակարգերի կազմում «տեղագրողների» հետ, ոչ էլ առանձին միջնախավ ընդունողների հետ և երկակի չափանիշներ է առաջարկում մտավորականության տեղի որոշման խնդրում։ Կողմ չլինելով հարցի բացարձակացմանը, Յու. Հարությունյանը եզրակացնում է. «Եթե խոսքը սեփականության ձևի մասին է, ասենք կոլտնտեսային, ապա մտավորականությանը (սեփականության նկատմամբ ունեցած վերաբերմունքով) միավորում է հետաքրքրությունների ընդհանրությունը կոլտնտեսականների այլ խմբերի հետ... Մյուս կողմից, աշխատանքի բնույթով, նույն կոլտնտեսային մտավորականությունը մտավորականության մյուս կատեգորիաների հետ կմիավորվի մի խավի մեջ»[27]։ Ապա հետևում է շարունակությունը. «Բոլոր դեպքերում ոչ միայն հնարավոր, այլև, համենայն դեպս, անհրաժեշտ է (եթե վերցնենք հիմնական սոցիալական հատկանիշները) այս խմբի մարդկանց երկակի բնութագրությունը»[28]։

Յու. Հարությունյանի այս տեսակետը հավանության է արժանանում որոշ ուսումնասիրողների կողմից, կոլտնտեսային մտավորականության սոցիալական տեղի գնահատման շուրջ ստեղծելով երրորդ ուղղությունը։ Այսպես, Պ. Սիմուշին միակողմանի է թվում ինչպես կոլտնտեսային մտավորականության բացառումը գյուղացիության դասակարգից, այնպես էլ նրա վանումը ընդհանուր մտավորական խավից[29]։ Փաստորեն, ընդունելով Յու. Հարությունյանի երկակի չափանիշները, Պ. Սիմուշը, մյուս կողմից էլ կոլտնտեսային մտավորականներին դասում է գյուղացիության կազմում[30], դրանով հակվելով դեպի այն ուղղությունը, որի ներկայացուցիչները մտավորականության սոցիալական տեղը որոշելիս հիմք են ընդունում արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը։

Համաձայն չլինելով առաջին խմբի տեսակետին, հակված չենք. ճշմարիտ համարելու նաև երրորդ ուղղությունը։ Համոզիչ չէ սոցիալական միևնույն խմբի նկատմամբ երկու ուղղահայաց (ըստ աշխատանքի) և հորիզոնական (ըստ սեփականության) չափանիշների օգտագործումը և դրանով մտավորականության սոցիալական տեղի խնդրի լուծումը։ Ինչպես իրավացիորեն եզրակացնում է Ս. Ամիրյանը, երկակի չափանիշների ընդունումը մտավորականությանը կդրկեր «հարաբերական ինքնուրույնությունից և կայունությունից, որպես առանձին սոցիալական խավից»[31]։

Ընդհանրացնելով ասվածը, կարող ենք եզրակացնել, որ լինելով կոլտնտեսության անդամ, կոլտնտեսային մտավորականությունը արտադրության տվյալ համակարգում զբաղված տեղով և աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ ունեցած դերով ամբողջովին առանձնանում է կոլտնտեսային գյուղացիությունից և ունի սոցիալիստական մտավորականությանը

27 Ю. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 11։
28 Նույն տեղում, էջ 11—12։
29 П. И. Симуш, նշվ. աշխ., էջ 29։
30 Նույն տեղում, էջ 30—32։
31 Ս. Ս. Ամիրյան, նշվ. աշխ., էջ 238։

ընորոշ բոլոր հատկանիշները։ Հետևաբար, դիշտ չէ արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը դարձնել ելակետ և կոլտնտեսային մասավորականներին մտցնել գյուղացիության դասակարգի մեջ։ Նրանք գյուղատնտեսական այլ կատեգորիաների մտավորականների հետ մտնում են սոցիալական մտավորականության խավի մեջ, հանդիսանալով վերջինիս ինքնուրույն՝ գյուղական արտադրական ջոկատը։

СТРУКТУРА И СОЦИАЛЬНОЕ МЕСТО СЕЛЬСКОЙ ПРОИЗВОДСТВЕННОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ

ВЛАДИК АКОПЯН

Резюме

Структуру сельской производственной интеллигенции—категории дипломированных специалистов, недипломированных специалистов-практиков и служащих-неспециалистов следует исследовать на основе выдвинутых некоторыми специалистами понятий «непосредственный» и «опосредованный» производительный труд, рассматриваемых ими в качестве основных классообразующих критериев. Применение данных критериев позволяет в вопросе оценки социального места колхозной интеллигенции прийти к следующему выводу: являясь членом колхоза, колхозная интеллигенция сохраняет все присущие социалистической интеллигенции признаки. Вследствие этого отношение к средствам производства не может служить критерием при определении ее социального места. Колхозная интеллигенция, представляя собой самостоятельный сельский производственный отряд, вместе с другими категориями сельской интеллигенции входит в единый слой советской интеллигенции.